

© Association of Judges of the RA,  
[http://www.judge.am/index.php?option=com\\_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en](http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en). [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 5, 2008.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF MAMEDOVA v. RUSSIA - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

**ՄԱՍԵՂՈՎԱՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործով  
ՎԵՒՌ**

Ստրասբուրգ, 1 հունիսի 2006թ.

**Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի գործով՝**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), որպես Պալատ նիստ գումարելով հետևյալ կազմով՝

*Նախագահ՝*

պրն C.L. ROZAKIS,

*Դատավորներ՝*

տկն N. VAJIĆ,

պրն A. KOVLER,

տկն E. STEINER,

պրն K. HAJIYEV,

պրն D. SPIELMANN,

պրն S.E. JEBENS,

և *Բաժանմունքի քարտուղար՝*

պրն S. NIELSEN,  
դռնփակ խորհրդակցելով 2006թ. մայիսի 11-ին,  
կայացրեց հետևյալ վճիռը, որը հաստատվեց նույն օրը:

## **ՓԱՍՏԵՐԸ**

### **1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ**

6. Դիմողը ծնվել է 1974 թվականին և բնակվում է Ռուսաստանի Վլադիմիր քաղաքում:

#### **A. Դիմողի դեմ հարուցված քրեական գործը**

##### *1. Դիմողի ձերբակալումը և կալանավորումը*

7. 2004թ. հուլիսի 20-ին քրեական գործ է հարուցվել մեկ այլ անձի հետ հանցավոր համագործակցությամբ դիմողի կողմից ենթադրյալ ֆինանսական խարդախության փաստի առթիվ:

8. 2004թ. հուլիսի 22-ին դիմողի բնակարանը խուզարկվել է, և նա տեղեկացվել է իր նկատմամբ առկա կասկածանքի մասին:

9. 2004թ. հուլիսի 23-ին դիմողը ձերբակալվել է և նրան մեղադրանք է առաջադրվել խոշոր չափերի խարդախության՝ Ռուսաստանի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար:

10. 2004թ. հուլիսի 24-ին Վլադիմիր քաղաքի Ֆրունզենսկի շրջանային դատարանն իր որոշմամբ թույլատրել է դիմողի կալանավորումը՝ այն հիմքով, որ նա մեղադրվում էր լուրջ հանցագործության համար, և որ նա կարող էր փախուստի դիմել, քանի որ նրա հանցակիցն արդեն փախչել էր, ինչպես նաև որ նա կարող էր ոչնչացնել ապացույցները, քանի որ որոշ փաստաթղթեր դեռևս չէին առգրավվել:

11. 2004թ. հուլիսի 26-ին դիմողը բողոքարկել է դատարանի որոշումը: Նա խնդրել է իր նկատմամբ կիրառել խափանման ավելի մեղմ միջոց և միջնորդել դատարանին՝

հաշվի առնել այն, որ իրեն մեղադրանք է առաջադրվել ֆինանսական հանցագործության համար, որ ինքը նախկինում դատված չի եղել, Վլադիմիրում ունի մշտական բնակության վայր և աշխատանք, ազգակցական կապեր, կայուն ապրելակերպ և երկու՝ չորս ու երեք տարեկան անչափահաս երեխաներ: Եթե կամենար, կարող էր փախչել իր բնակարանի խուզարկությունից հետո: Փաստը, որ ինքը չի խուսափել արդարադատությունից, ապացուցում է, որ նման մտադրություն չի ունեցել: Նա նաև զանգատվել է իրեն կալանքի տակ պահելու անմարդկային պայմաններից և խնդրել իրեն ազատ արձակել վերադաս դատարանի առջև ներկայանալու համար:

12. 2004թ. օգոստոսի 10-ին Վլադիմիրի մարզային դատարանն անփոփոխ է թողել 2004թ. հուլիսի 24-ի կալանավորման մասին որոշումը՝ գտնելով, որ այն եղել է օրինական, բավարար հիմնավորված և արդարացված: Մարզային դատարանի կարծիքով՝ շրջանային դատարանը ճիշտ է գնահատել դիմողի »անձը« բնութագրող հանգամանքները և դատախազի կողմից ներկայացված մյուս նյութերը: Վերադաս դատարանում բողոքի քննությունը տեղի է ունեցել դատախազի ներկայությամբ, ով կրկնել է շրջանային դատարանի և դիմողի երկու պաշտպանների առջև ներկայացված փաստարկները: Դիմողի՝ անձամբ ներկայանալու միջնորդությունը մերժվել է, քանի որ նրա փաստարկները պարզորոշ ներկայացված են եղել իր բողոքում և լրացուցիչ պարզաբանում չեն պահանջել:

## *2. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2004թ. նոյեմբերի 23-ը*

13. 2004թ. սեպտեմբերի 22-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանը դիմողի կալանքի ժամկետը երկարացրել է մինչև 2004թ. նոյեմբերի 23-ը: Իր որոշումը դատարանը հիմնավորել է դիմողին առաջադրված մեղադրանքի ծավալով և դիմողի՝ արդարադատությունից խուսափելու հնարավորությամբ:

14. 2004թ. սեպտեմբերի 27-ին դիմողը բողոք է ներկայացրել: Նա պնդել է, որ 2004թ. սեպտեմբերի 22-ի որոշումը բավականաչափ պատճառաբանված չի եղել, որ դատարանը հաշվի չի առել իր անձնական վիճակը, և որ իրեն կալանքի տակ պահելու պայմաններն անմարդկային են եղել: Նա միջնորդել է իրեն ազատ արձակել գրավով:

15. Բողոքի քննությունը նշանակվել է 2004թ. հոկտեմբերի 19-ին: Այդ օրը նիստը հետաձգվել է, որովհետև դիմողը չէր բերվել դատարան:

16. 2004թ. նոյեմբերի 3-ին Վլադիմիրի մարզային դատարանը գտել է, որ խափանման միջոցը փոխելու հիմք չկա և անփոփոխ է թողել 2004թ. սեպտեմբերի 22-ի որոշումը:

### *3. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2004 թվականի դեկտեմբերի 23-ը*

17. 2004թ. նոյեմբերի 22-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանը դիմողի կալանքի ժամկետը երկարացրել է մինչև 2004թ. դեկտեմբերի 23-ը, գտնելով, որ`

«... անհրաժեշտ է կատարել բազմաթիվ քննչական գործողություններ [դիմողի] մասնակցությամբ:

[Դիմողը] մեղադրվում է լուրջ քրեական հանցագործության համար: Բացի դրանից, մեղադրանքի կողմը ներկայացրել է փաստաթղթեր, համաձայն որոնց` ազատ արձակվելով` [դիմողը] կարող է խուսափել արդարադատությունից և խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը:

Դատարանը պատճառ չի տեսնում [դիմողի] նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու համար«:

18. 2004թ. դեկտեմբերի 1-ին դիմողը բողոք է ներկայացրել: 2004թ. դեկտեմբերի 27-ին Վլադիմիրի մարզային դատարանն անփոփոխ է թողել այդ որոշումը: Այն գտել է, որ որոշումը եղել է օրինական և բավականաչափ պատճառաբանված:

### *4. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2005 թվականի հունվարի 23-ը*

19. 2004թ. դեկտեմբերի 22-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանը դիմողի կալանքի ժամկետը երկարացրել է մինչև 2005թ. հունվարի 23-ը` հիմք ընդունելով մեղադրանքի ծավալը և նախաքննությունը շարունակելու անհրաժեշտությանը: Դատարանը նաև նշել է, որ դիմողը կարող է փախչել, խոչընդոտել արդարադատության իրականացմանը կամ կատարել նոր հանցանք:

20. 2004թ. դեկտեմբերի 27-ին դիմողը բողոք է ներկայացրել: Մասնավորապես նա վկայակոչել է իրեն արգելանքի տակ պահելու անմարդկային պայմանները և միջնորդել իրեն գրավով ազատ արձակել:

21. 2005թ. փետրվարի 1-ին Վլադիմիրի մարզային դատարանն անփոփոխ է թողել 2004թ. դեկտեմբերի 22-ի որոշումը: Մասնավորապես, վերադաս դատարանը նշել է, որ «կալանավորման պայմանները չէին կարող հաշվի առնվել կալանքի ժամկետը երկարացնելիս»:

##### *5. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2005 թվականի մարտի 20-ը*

22. 2005թ. հունվարի 21-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանը դիմողի կալանքի ժամկետը երկարացրել է մինչև 2005թ. մարտի 20-ը: Հիմնավորումը նույնն էր, ինչ 2004թ. դեկտեմբերի 22-ի որոշմանը:

23. 2005թ. հունվարի 24-ին դիմողը բողոքարկել է նշված որոշումը: Նա հայտարարել է, որ արդեն վեց ամիս անցկացրել է կալանքի տակ, և որ ներպետական օրենսդրությամբ կալանքի ժամկետի երկարացումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ գործն առանձնապես բարդ է: Սեղադրանքի կողմը չի հիմնավորել, որ գործն առանձնապես բարդ է: Այն նաև չի ապացուցել, որ ինքն ունեցել է թաքնվելու կամ ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելու մտադրություն: Դատախազությունը խուզարկել է դիմողի բնակարանն ու գրասենյակը և առգրավել բոլոր փաստաթղթերը: Այդ իսկ պատճառով ինքը չէր կարող ոչնչացնել որևէ ապացույց: Դիմողը խնդրել է դատարանին հաշվի առնել իր անձնական վիճակը՝ այն, որ ինքը երկու անչափահաս երեխաների մայր է, ունի մշտական բնակության վայր և աշխատանք՝ Վլադիմիրում, ինչպես նաև իրեն կալանքի տակ պահելու անմարդկային պայմանները: Նա բողոքել է, որ հնարավորություն չի ունեցել ուսումնասիրելու մեղադրանքի կողմի ներկայացրած՝ կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը հիմնավորող նյութերը:

24. 2005թ. փետրվարի 22-ին Վլադիմիրի մարզային դատարանն անփոփոխ է թողել 2005թ. հունվարի 21-ի որոշումը: Վերադաս դատարանը հաստատել է առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը: Նաև այն նշել է.

»[Դիմողի] փաստաբանի կարծիքն առ այն, որ կալանքի ժամկետը երկարացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել կալանավայրի պայմանները, որևէ հիմք չունի ներպետական օրենսդրությունում...

Քրեադատավարական օրենսդրության նորմերը (Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ և 109-րդ հոդվածներ) մեղադրանքի կողմի ներկայացրած՝ կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը հիմնավորող նյութերի բացահայտում չեն նախատեսում»:

#### *6. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2005 թվականի մայիսի 20-ը*

25. 2005թ. մարտի 18-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանը որոշում է կայացրել դիմողի կալանքի ժամկետը մինչև 2005թ. մայիսի 20-ը երկարացնելու մասին: Այն նշել է, որ դիմողը մեղադրվել է լուրջ քրեական հանցագործության մեջ, որ դա անհրաժեշտ է լրացուցիչ նախաքննության համար, և որ որևէ պատճառ չի եղել խափանման միջոցը փոխելու համար:

26. 2005թ. մարտի 24-ին դիմողը բողոք է ներկայացրել: 2005թ. ապրիլի 19-ին Վլադիմիրի մարզային դատարանն անփոփոխ է թողել որոշումը:

#### *7. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2005 թվականի հունիսի 20-ը*

27. 2005թ. մայիսի 19-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանը դիմողի կալանքի ժամկետը երկարացրել է մինչև 2005թ. հունիսի 20-ը: Այն նշել է, որ երկարացումը «օբյեկտիվորեն արդարացված է եղել» գործի բարդության, մեղադրանքի ծավալի և դիմողի փախչելու կամ նրա կողմից ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելու վտանգի պատճառով:

28. 2005թ. մայիսի 27-ին դիմողը բողոքարկել է այդ որոշումը: Նա կրկնել է 2005թ. հունվարի 24-ի բողոքի փաստարկները՝ ավելացնելով, որ իր հայրը ծանր հիվանդ է: 2005թ. հունիսի 21-ին Վլադիմիրի մարզային դատարանը մերժել է բողոքը:

#### *8. Կալանքի ժամկետի երկարացումը մինչև 2005 թվականի հուլիսի 20-ը*

29. 2005թ. հունիսի 17-ին Ֆրունզենսկի շրջանային դատարանի որոշմամբ դիմողի կալանքի ժամկետը երկարացվել է մինչև 2005թ. հուլիսի 20-ը: Որոշումը հիմնավորվել է գործի բարդությամբ (13 հատորից բաղկացած քրեական գործ), լրացուցիչ քննության անհրաժեշտությամբ, մեղադրանքի ծավալի, ինչպես նաև դիմողի փախչելու կամ ճշմարտության բացահայտմանը նրա կողմից խոչընդոտելու վտանգի առկայությամբ:

30. Դիմողի ներկայացրած բողոքի քննության արդյունքում Վլադիմիրի մարզային դատարանը 2005թ. հուլիսի 28-ին անփոփոխ է թողել շրջանային դատարանի որոշումը:

*9. Դիմողին կալանքի տակ պահելու ժամկետի հետագա երկարացումը և նրա ազատ արձակումը*

31. 2005թ. հուլիսի 14-ին գործի նախնական քննությունն ավարտվել է և դիմողի գործը փոխանցվել դատարան: Դիմողի պաշտպանները դատարան են ներկայացրել նրան ազատ արձակելու միջնորդություն:

32. 2005թ. հուլիսի 19-ին Վլադիմիրի Լենինսկի շրջանային դատարանն առաջին նիստը նշանակել է 2005թ. օգոստոսի 2-ին և որոշել, որ դիմողը պետք է մնա կալանքի տակ:

33. 2005թ. օգոստոսի 2-ին Լենինսկի շրջանային դատարանը գտել է, որ գործը չի կարող ըստ էության քննության առնվել, քանի որ դիմողը բավարար ժամանակ չի ունեցել գործի նյութերին ծանոթանալու համար, և գործը վերադարձրել է լրացուցիչ նախաքննության: Դատարանը որոշել է, որ այդ ընթացքում դիմողը պետք է մնա կալանքի տակ:

34. 2005թ. օգոստոսի 4-ին Վլադիմիրի դատախազության գործին մասնակցող դատախազը փոխել է խափանման միջոցը: Չհեռանալու մասին ստորագրությամբ դիմողն ազատ է արձակվել:

**B. Դիմողի կալանավորման պայմանները**

35. Դիմողը կալանքի տակ է պահվել Վլադիմիրի մարզի թիվ ԻՁ-33/1 կալանավայրում:

*1. Յուրաքանչյուր բանտախցում պահվող բանտարկյալների թիվը*

36. Համաձայն Կառավարության ներկայացրած՝ կալանավայրի վարչակազմի 2005թ. օգոստոսի 11-ի տեղեկանքի՝ դիմողը պահվել է չորս բանտախցերում, որոնք ունեցել են հետևյալ նկարագրությունը. թիվ 73 և 74 բանտախցերը (22 քառակուսի մետր, 18 մահճակալ, միջինը՝ 14 բանտարկյալ) և թիվ 70 բանտախուցը (25 քառակուսի մետր, 15 մահճակալ, միջինը՝ 10 բանտարկյալ): Կառավարությունը հայտարարել է, որ դիմողը մշտապես ունեցել է առանձին մահճակալ:

37. Դիմողը չի վիճարկել բանտախցի չափսերը և մահճակալների թիվը: Այդուհանդերձ, նա չի համաձայնել Կառավարության ներկայացրած բանտարկյալների թվին: Ըստ նրա՝ 2004թ. հուլիսից մինչև 2005թ. մարտ իրեն պահել են թիվ 73 բանտախցում՝ 15-22 բանտարկյալների հետ միասին, 2005թ. մարտի 2-4-ն իրեն պահել են թիվ 69 բանտախցում, որտեղ եղել են 14 կալանավորներ, դրանից հետո և մինչև 2005թ. մայիսի 18-ն իրեն պահել են թիվ 70 բանտախցում՝ 10 այլ բանտարկյալների հետ մեկտեղ, 2005թ. մայիսի 19-ին իրեն վերադարձրել են թիվ 74 բանտախուց, որտեղ եղել է մինչև 20 կալանավոր: Թիվ 73 և 74 բանտախցերում նա միշտ չէ, որ ունեցել է առանձին մահճակալ:

*2. Սանիտարական վիճակը և սարքավորումները, ջերմաստիճանը և ջրամատակարարումը*

38. Կառավարությունը, հիմնվելով կալանավայրի վարչակազմի կողմից 2005թ. օգոստոսի 11-ին ներկայացված տեղեկանքի վրա, հայտարարել է, որ բոլոր բանտախցերում եղել են զուգարաններ: Ձուգարանը չի ունեցել ծածկ, սակայն այն բնակելի հատվածից առանձնացված է եղել մեկ մետր բարձրությամբ աղյուսե պատով և լրացուցիչ 1,2 մետր բարձրությամբ վարագույրով: Շաբաթը մեկ անգամ բանտարկյալներին տրվել են մաքրող միջոցներ (սոդա և քլոր): ճաշասեղանը տեղադրված է եղել զուգարանից երեք մետր հեռավորության վրա:

Բանտարկյալներին թույլատրվել է ցնցուղ ընդունել շաբաթը մեկ անգամ: Բանտախցերը պատուհանից և դռան անցքից բնական օդափոխություն են ունեցել: Խնդրանքի դեպքում տրամադրվել են օդափոխիչներ: Հոսող տաք ջուր չի եղել, սակայն կալանավորներին թույլ է տրվել օգտագործել տաքացուցիչներ: Բացի դրանից, բաժանվել է տաք ջուր՝ լվացքի համար, և եռացրած ջուր՝ խմելու համար: Շաբաթը մեկ անգամ բանտարկյալներին տրամադրվել են մաքուր անկողնային սպիտակեղեն, սրբիչներ և խոհանոցային սպասք: Բանտախցերում եղել են ֆլուորեսցենտային լապտերներ, որոնք լուսավորել են և՛ գիշերը, և՛ ցերեկը:

39. Դիմողը չի համաձայնել Կառավարության նկարագրությանը և հայտարարել է, որ սանիտարական պայմանները եղել են անբավարար: Բանտախցերը լեփլեցուն են եղել միջատներով, առնետներով և մկներով: Բանտարկյալները ստիպված են եղել լվացքն անել ներսում՝ բանտախցերում, առաջացնելով չափազանց բարձր խոնավություն: Արհեստական օդափոխման համակարգ չի եղել: Օդափոխիչ տրամադրվել է միայն 2005թ. հունիսին: Պատուհանները ծածկված են եղել հաստ մետաղե ճաղերով, որոնք փակել են բնական լույսի մուտքը: Արհեստական լույսը երբևէ չի անջատվել՝ դիմողին խանգարելով քնել:

40. Դիմողը վիճարկել է Կառավարության կողմից ներկայացված՝ զուգարանային հարմարանքների նկարագրությունը: Ջուգարանը լվացվել է ոչ հաճախ, և այն եղել է շատ կեղտոտ ու գարշահոտ: Ավելին, այն չի ունեցել որևէ ծածկ: Բանտարկյալներն անցքին ամրացրել են պլաստիկ շիշ՝ հոտի տարածումը կանխելու համար: Չի եղել որևէ վարագույր, և բանտարկյալները ստիպված են եղել կախել անկողնու երես, որով չի ապահովվել բավարար մեկուսացում: Ջուգարանային պիտույքներ չեն տրամադրվել, բացառությամբ ամեն շաբաթ տրամադրվող 100 գրամ սոդայի և քլորի ու 33 գրամ լվացքի օճառի:

41. Դիմողին թույլատրվել է ցնցուղ ընդունել շաբաթը մեկ անգամ: Ցնցուղ ընդունելու համար ամբողջ բանտախցին տրամադրվել է տասնհինգ րոպե՝ չնայած եղել է ընդամենը չորս ցնցուղ: Օճառը տրամադրվել է ցնցուղից հետո: Ձմռանը լողասենյակում չափազանց ցուրտ է եղել: Դատական նիստերի կամ ընտանիքի անդամների հետ տեսակցությունների օրերին դիմողը բաց էր թողնում ցնցուղ ընդունելու իր հնարավորությունը:

### 3. Բացօթյա զբոսանքները

42. Կառավարությունը հայտարարել է, որ դիմողն ամեն օր ունեցել է մեկժամյա զբոսանքի հնարավորություն:

43. Դիմողն ընդունել է, որ մեկժամյա զբոսանքի հնարավորություն ունեցել է ամեն օր: Այդուհանդերձ, ցնցուղ ընդունելու օրերին բանտարկյալներին թույլ չեն տվել դուրս գալ զբոսանքի: Բանտախցում պահվող բոլոր բանտարկյալները դուրս չէին բերվում զբոսանքի՝ որպես կոլեկտիվ պատիժ միայն մեկ բանտարկյալի կատարած կարգապահական զանցանքի համար: Ջբոսանքի համար նախատեսված տարածքները պարսպապատված էին 2,5 մետր բարձրությամբ աղյուսե պատերով, որոնց վրա եղել են վանդակաձողեր: Դրանք ծածկված էին մետաղե տանիքով՝ տանիքի և պատերի ծայրերի միջև եղած մեկ մետր անցքով: Ամռանը ներսում չափազանց շոգ ու տոթ էր, քանի որ արևը թեժացրել է տանիքը: Ջբոսանքի համար նախատեսված տարածքներից մեծ մասի մակերեսն ինը քառակուսի մետր էր, միանգամից զբոսանքի է բերվել մինչև տասը անձ:

## II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

44. 2002թ. հուլիսի 1-ից ի վեր քրեադատավարական հարաբերությունները կարգավորվում են Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքով (2001թ. դեկտեմբերի 18-ի Օրենք թիվ 174-FZ, "CCrP"):

45. «Խափանման միջոցները» (*Վպրօ տրայրպփպվո՛*) ներառում են չհեռանալու մասին ստորագրությունը (պարտավորությունը), անձնական երաշխավորությունը, գրավը և կալանքը (98-րդ հոդված): Անհրաժեշտության դեպքում կասկածյալի կամ մեղադրյալի վրա կարող է դրվել ներկայանալու պարտավորություն (*Տո՛ջոՅպսՖրՅՉՏ Տ՛ՉՍպ*) (112-րդ հոդված):

46. Խափանման միջոց ընտրելիս իրավասու մարմինը պետք է որոշի՝ արդյոք »բավարար հիմքեր» կան ենթադրելու, որ կասկածյալը փախուստի կդիմի նախնական քննության կամ դատական քննության ընթացքում, կկատարի նոր հանցագործություն կամ կխոչընդոտի ճշմարտության բացահայտմանը (97-րդ

հողված): Պետք է հաշվի առնվեն նաև մեղադրանքի ծավալը, կասկածյալի անձի մասին տեղեկությունները, նրա մասնագիտությունը, տարիքը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը և այլ հանգամանքներ (99-րդ հոդված):

47. Դատարանը կարող է կալանավորման մասին որոշում կայացնել, եթե հանցագործության համար նախատեսված է «առնվազն երկու տարի» ժամկետով ազատազրկում, և եթե չի կարող կիրառվել խափանման ավելի մեղմ միջոց (108-րդ հոդվածի 1-ին կետ):

48. Կալանավորումից հետո մեղադրյալը «նախնական քննության ընթացքում» վերցվում է արգելանքի: «Նախնական քննության ընթացքում» կալանքի առավելագույն տևողությունը երկու ամիս է, սակայն այն կարող է երկարացվել մինչև տասնութ ամիս՝ «բացառիկ հանգամանքների» առկայության դեպքում (109-րդ հոդվածի 1-3-րդ կետեր): «Նախնական քննության ընթացքում» կալանքի տևողությունը հաշվարկվում է մինչև այն օրը, երբ դատախազը գործն ուղարկում է դատարան (109-րդ հոդվածի 9-րդ կետ):

49. Սկսած այն օրից, երբ դատախազը գործն ուղարկում է դատարան, ամբաստանյալը գտնվում է «դատական քննության ընթացքում» կալանքի տակ: «Դատական քննության ընթացքում» կալանքի տևողությունը հաշվարկվում է մինչև դատավճռի կայացումը: Սովորաբար այն չի կարող գերազանցել վեց ամիսը, սակայն եթե գործը վերաբերում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններին, դատարանը կարող է կալանքի ժամկետը մեկ կամ մի քանի անգամ երկարացնել՝ յուրաքանչյուր անգամ ոչ ավելի, քան երեք ամսով (225-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր):

50. Կալանքի կամ դրա ժամկետը երկարացնելու մասին դատական որոշման դեմ երեք օրվա ընթացքում կարող է բողոք բերվել վերադաս դատարան: Վերադաս դատարանը պետք է որոշում կայացնի բողոքն ընդունելուց հետո երեք օրվա ընթացքում (108-րդ հոդվածի 10-րդ կետ):

### III. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

51. Հանցագործությունների կանխման և հանցագործների նկատմամբ վերաբերմունքի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության առաջին

համաժողովի կողմից 1955թ. ժնկում ընդունված և 1957թ. հուլիսի 31-ին Տնտեսական և սոցիալական խորհրդի 663 Շ (XXIV) բանաձևով հաստատված՝ Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտային կանոնները, մասնավորապես, նախատեսում են հետևյալը.

»10. Բանտարկյալների համար նախատեսված ողջ տարածքը, մասնավորապես՝ քնելու համար նախատեսված տարածքը պետք է բավարարեն առողջության պահպանման բոլոր պահանջները, պետք է պատշաճ ուշադրություն դարձվի ... հատակի նվազագույն չափին, լուսավորությանը և օդափոխությանը...

11. Բոլոր վայրերում, որտեղ բանտարկյալները բնակվում կամ աշխատում են՝

(a) պատուհանները պետք է բավականաչափ մեծ լինեն, որպեսզի բանտարկյալները կարողանան ընթերցել բնական լույսի պայմաններում, և պետք է այնպիսի կառուցվածք ունենան, որպեսզի ապահովվի մաքուր օդի մուտքը՝ անկախ այն հանգամանքից, թե՛ արհեստական օդափոխություն կա՞, թե ոչ,

(b) արհեստական լուսավորումը պետք է բավարար լինի բանտարկյալների ընթերցանության կամ աշխատանքի համար՝ առանց տեսողությունը վնասելու:

12. Սանիտարական միջոցները պետք է բավարար լինեն յուրաքանչյուր բանտարկյալի համար, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի բավարարել բնական կարիքները մաքուր և պատշաճ պայմաններում:

13. Համապատասխան լոգանքի և ցնցուղ ընդունելու հարմարանքները պետք է լինեն այնպիսին, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա ընդունել լոգանք կամ ցնցուղ ... շաբաթը առնվազն մեկ անգամ՝ համապատասխան ջերմաստիճանի պայմաններում:

14. Բանտարկյալների կողմից օգտագործվող զուգարանները պետք է պահպանվեն պատշաճ ձևով և միշտ անթերի մաքուր լինեն:

15. Բանտարկյալները պետք է կարողանան պահպանել իրենց անձնական մաքրությունը, և այդ նպատակով նրանք պետք է ապահովվեն ջրով և այնպիսի լոգարանային պիտույքներով, որոնք անհրաժեշտ են առողջության և մաքրության համար...

19. Յուրաքանչյուր բանտարկյալ ... պետք է առանձին մահճակալ և առանձին պատշաճ սպիտակեղեն ունենա, որը նրանց տրամադրելու պահին պետք է մաքուր լինի, պահվի լավ վիճակում և փոխվի բավականին հաճախ՝ մաքրությունը պահպանելու նպատակով:

21. (1) Յուրաքանչյուր բանտարկյալ ... պետք է ամեն օր, եթե եղանակը թույլ է տալիս, առնվազն մեկ ժամ մաքուր օդում զբոսնելու հնարավորություն ունենա»:

52. Խոշտանգումների և ամարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ Պատժի արգելման (CPT) եվրոպական կոմիտեի 2-րդ ընդհանուր զեկույցի համապատասխան հատվածների համաձայն.

»46. Գերլեցունությունը CPT-ի մանդատին անմիջականորեն վերաբերող հարցերից է: Ներբանտային բոլոր ծառայությունները և գործընթացները կխախտվեն, եթե բավարարվեն ավելի շատ բանտարկյալների կարիքներ, քան բանտը նախատեսված է ունենալու... Ավելին, բանտում կամ դրա առանձին մասում լեցունության աստիճանը պետք է լինի այնպիսին, որպեսզի ֆիզիկապես ինքնին անմարդկային կամ նվաստացուցիչ չլինի:

48. Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի զբոսանքներին: Պահանջը, որ բանտարկյալներն օրական առնվազն մեկ ժամ գտնվեն մաքուր օդում, որպես կարևորագույն երաշխիք, լայնորեն ընդունված է ... Նաև ակնհայտ է, որ զբոսանքների համար նախատեսված վայրերը պետք է բավարար չափսեր ունենան...

49. Պատրաստի պատշաճ զուգարանային պիտույքներից օգտվելը և հիգիենայի պահանջների պահպանումը մարդկային միջավայրի կարևորագույն տարրեր են...

50. CPT ավելացնում է, որ այն հատկապես անհանգստացած է այնպիսի դեպքերի առնչությամբ, երբ միևնույն հաստատությունում հայտնաբերվում է գերլեցունության, ծառայությունների թույլ մակարդակի և զուգարանային/վացման պիտույքներից օգտվելու հնարավորության անբավարարության համակցություն: Նման պայմանների համատեղ արդյունքը բանտարկյալների համար կարող է ծայրահեղ վտանգավոր լինել»:

53. Կանանց կալանքի տակ պահելու պայմանները սահմանող CPT-ի 10-րդ ընդհանուր զեկույցի համապատասխան հատվածները [CPT/ Inf (2000) 13] նախատեսում են.

»21. ... Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում կին բանտարկյալներն ազատությունից զրկված անձանց թվում փոքրամասնություն են կազմում: Կալանքի տակ գտնվող կանանց համար առանձին պայմանների նախատեսումը պետության համար կարող է թանկ արժենալ, ինչի հետևանքով նրանք հաճախ պահվում են փոքրաթիվ վայրերում (երբեմն՝ իրենց տներից շատ հեռու, իրենց հետ երեխաներ ունենալով), որոնք ի սկզբանե նախատեսված են եղել (և, հնարավոր է, բնակեցված են եղել) տղամարդ կալանավորների համար: Նման հանգամանքներում պետք է երաշխավորված լինի, որ ազատությունից զրկված կանայք պահվեն անվտանգ և արժանավայել պայմաններում...

30. Հանձնաժողովը ցանկանում է ուշադրություն հրավիրել նաև հիգիենայի և առողջության հետ կապված հարցերի վրա, որոնց վերաբերմամբ ազատությունից զրկված կանանց կարիքները տարբերվում են տղամարդկանց կարիքներից:

31. Կանանց՝ հիգիենայի առանձնահատուկ կարիքները պետք է համարժեքորեն բավարարվեն: Սանիտարական և լվացման վայրեր ազատ մուտք գործելը, արյունը կանգնեցնելու համար նախատեսված պիտույքներից, ինչպես նաև հիգիենայի այնպիսի միջոցներից օգտվելը, ինչպիսիք են սանիտարական սրբիչները և միջադիրները, մեծ կարևորություն ունեն:

Այսպիսի կարևորագույն պիտույքներ չտրամադրելը կարող է ինքնին հանդիսանալ նվաստացուցիչ վերաբերմունք:»

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

### **I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ**

54. Դիմողը բողոքել է, որ թիվ ԻԶ-33/1 կալանավայրում իրեն կալանքի տակ պահելու պայմանները խախտել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, համաձայն որի՝

»Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»

#### **A. Ընդունելիությունը**

55. Կառավարությունն առարկել է՝ նշելով, որ դիմողը չի սպառել իրեն հասանելի ներպետական միջոցները: Մասնավորապես, իրեն կալանքի տակ պահելու պայմանների կապակցությամբ նա բողոք չի ներկայացրել Վլադիմիրի մարզային դատախազություն կամ ՌԴ գլխավոր դատախազության՝ քրեական պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (*ձտՐՈՉսպվՈպ տՏ վՈՊԶՏՐԳ ջՈ ջՈՍՍվվՏրՑՖ՝ ՈրտՏսվպվՐ՝ ցչՏսՏՉվօԼ վՈՍՈջՈվՈռ թպվպՐՈսՖվՏռ կՐՏՍցՐՈՑԳՐօ ՀԴ*) կամ դատարան:

56. Դիմողը հայտարարել է, որ իր կալանավորման պայմանների կապակցությամբ ինքը բողոք է ներկայացրել յուրաքանչյուր դատական նիստի ընթացքում:

Անմարդկային պայմանների մասին նա բազմիցս նշել է իր յուրաքանչյուր վերաքննիչ բողոքում: Այդուհանդերձ, դատարանները կա՛մ անտեսել են իր բողոքները, կա՛մ պատասխանել, որ »պայմանները նույնն են բոլորի համար»: Նա չի դիմել դատախազությանը, որովհետև նման դիմումն արդյունավետ միջոց չի եղել: Դատախազները ներկա են եղել դատական նիստերին, նրանք լսել են իր բողոքները և հնարավորություն են ունեցել ընթերցելու իր վերաքննիչ բողոքները: Այնուամենայնիվ, նրանք անգործություն են դրսևորել և ոչինչ չեն նախաձեռնել իրավիճակը բարելավելու համար:

57. Դատարանը նշում է, որ դիմողն իր կալանքի վատ պայմանների դեմ բազմիցս բողոքել է դատարան և վերադաս դատարաններ: Այդ բողոքները ներկայացվել են նաև դատախազին: Այդ պատճառով Դատարանը գտնում է, որ իշխանությունները բավականաչափ տեղեկացված են եղել դիմողի վիճակի մասին: Գիշտ է, նա առանձին բողոքներ չի ներկայացրել դատարաններին, դատախազությանը կամ Կառավարության կողմից առաջարկված այլ պետական հաստատությունների: Այդուհանդերձ, Կառավարությունը չի պարզաբանել, թե այդ հաստատությունների կողմից դիմողին ինչպիսի փոխհատուցում կարող էր տրամադրվել՝ հաշվի առնելով, որ կալանքի պայմաններից ծագած խնդիրները մասամբ եղել են համակարգային բնույթի և առնչվել են ոչ միայն իր անձնական վիճակին (տե՛ս *Moiseyev v. Russia*, 2004թ. դեկտեմբերի 9-ի որոշումը, թիվ 62936/00; *Kalashnikov v. Russia*, 2001թ. սեպտեմբերի 18-ի որոշումը, թիվ 47095/99): Այդ պատճառով Դատարանը գտնում է, որ պաշտպանության ներպետական միջոցները սպառված չլինելու հիմքով սույն գանգատը չի կարող մերժվել:

58. Դատարանը նշում է, որ սույն գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այն նաև նշում է, որ գանգատն անընդունելի չէ այլ հիմքերով ևս: Այդ պատճառով այն պետք է ճանաչվի ընդունելի:

## **B. Ըստ էության**

### **1. Կողմերի փաստարկները**

59. Կառավարությունը նշել է, որ բանտախցերի գերլեցումն լինելու պատճառը եղել է այն, որ տվյալ հաստատությունում կատարվել են նորոգման աշխատանքներ: Գերլեցումությունը կարող էր դիմողին որոշակի անհարմարություն պատճառել: Այդուհանդերձ, իշխանությունները նրան նվաստացնելու որևէ մտադրություն չեն ունեցել: Այլ հարցերում կալանքի պայմանները եղել են բավարար: Նա ունեցել է առանձին մահճակալ և անկողնային բոլոր պիտույքները, պահպանվել են սանիտարական և հիգիենիկ նորմերը: Նա ունեցել է ամենօրյա զբոսանքների հնարավորություն: Ընդհանուր առմամբ, դիմողի կալանավորման պայմանները եղել են 3-րդ հոդվածի հետ համատեղելի:

60. Դիմողը կասկածի տակ է դրել թիվ ԻԶ-33/1 կալանավայրի պայմանների՝ Կառավարության կողմից ներկայացված նկարագրությունը՝ համարելով այն սխալ: Նա Դատարանի ուշադրությունը հրավիրել է այն փաստի վրա, որ Կառավարությունը ներկայացրել է ոչ թե բանտարկյալների կոնկրետ թիվը, այլ սոսկ մոտավոր թիվ: Իրականում յուրաքանչյուր բանտախցում գտնվող բանտարկյալների թիվը եղել է ավելին, քանի Կառավարության կողմից ներկայացվածը, և ինքը ոչ միշտ է ունեցել առանձին մահճակալ: Հաստատությունում կատարվող նորոգման աշխատանքները եղել են իրեն գերլեցում տեղերում պահելու ոչ համոզիչ արդարացում: Եվ, վերջապես, բանտախցերը եղել են մութ, սառը, հեղձուցիչ, լի միջատներով: Ձուգարանները կեղտոտ և գարշահոտ են եղել ու առանձնացված չեն եղել: Անկողինը կեղտոտ և պատառոտված է եղել: Հոսող տաք ջուր չի եղել, խմելու ջուր չի տրամադրվել: Սնունդը խիստ վատորակ է եղել: Բացօթյա զբոսանքի իրական հնարավորություն չի եղել, քանի որ զբոսանքի համար նախատեսված տարածքները չափազանց մարդաշատ են եղել, ինչպես նաև ծածկված մետաղե տանիքով, ինչն էապես սահմանափակել է մաքուր օդի մուտքը:

## *2. Դատարանի գնահատականը*

61. Վլադիմիրի մարզի թիվ ԻԶ-33/1 կալանավայրում կալանքի իրական պայմանների հարցում կողմերը տարակարծիք են: Այդուհանդերձ, Դատարանը կարիք չունի պարզելու յուրաքանչյուր և բոլոր պնդումների ճշմարտացիությունը, որովհետև այն փաստերի հիման վրա, որոնք ներկայացվել են կամ կասկածի տակ չեն դրվել

պատասխանող Կառավարության կողմից, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում՝ ստորև ներկայացվող պատճառներով:

62. Կողմերն ըստ էության համաձայնել են, որ թիվ ԻԶ-33/1 կալանավայրում բանտախցերը եղել են գերլեցուն: Թիվ 69, 73 և 74 բանտախցերում յուրաքանչյուր բանտարկյալի տրամադրվել է 2 քառակուսի մետրից պակաս տարածք: Ավելի քան մեկ տարի դիմողն օրուգիշեր բանտարկված է եղել իր բանտախցում՝ բացառությամբ ամենօրյա մեկ ժամ տևած զբոսանքի:

63. Դատարանի վերլուծության համար էական չէ, թե գերլեցունությունը եղել է նորոգման աշխատանքների, թե այլ պատճառներով. Կառավարության պարտականությունն է իր քրեակատարողական համակարգն այնպես կազմակերպել, որպեսզի հարգվի բանտարկյալների արժանապատվությունը՝ անկախ ֆինանսական կամ նյութատեխնիկական բարդություններից:

64. Դատարանը բազմիցս 3-րդ հոդվածի խախտում է ճանաչել բանտարկյալներին բնակության պատշաճ տարածք չտրամադրելու կապակցությամբ (տե՛ս *Khudoyorov v. Russia*-ի վճիռը, թիվ 6847/02, 104 և հետագա կետեր, ECHR 2005-... (հատվածներ), *Labzov v. Russia*, 2005թ. հունիսի 16-ի վճիռը, թիվ 62208/00, 44 և հետագա կետեր, *Novoselov v. Russia*, 2005թ. հունիսի 2-ի վճիռը, թիվ 66460/01, 41 և հետագա կետեր, *Mayzit v. Russia*, 2005թ. հունվարի 20-ի վճիռը, թիվ 63378/00, 39 և հետագա կետեր, *Kalashnikov v. Russia*, թիվ 47095/99, 97 և հետագա կետեր, ECHR 2002-VI, *Peers v. Greece*, թիվ 28524/95, 67 և հետագա կետեր, ECHR 2001-III):

65. Հաշվի առնելով հարցի կապակցությամբ իր նախադեպային իրավունքը և կողմերի ներկայացրած նյութերը՝ Դատարանը գտնում է, որ Կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստ կամ փաստարկ, որը Դատարանին կհամոզեր սույն գործով հանգելու այլ եզրակացության: Այն փաստը, որ դիմողը ստիպված է եղել բնակվել, քնել և զուգարանից օգտվել միևնույն բանտախցում, այդքան մեծ թվով այլ բանտարկյալների հետ մեկտեղ, ինքնին բավարար էր կալանքի ընթացքում պատճառվող անխուսափելի զրկանքի մակարդակը գերազանցող անհարմարություններ և բարդություններ ունենալու համար, և դիմողի մոտ առաջացրել է վախ, զայրույթ և անլիարժեքության զգացում, որով նրան վիրավորանք և նվաստացում է պատճառվել:

66. Ինչ վերաբերում է Կառավարության այն փաստարկին, որ իշխանությունները մտադրություն չեն ունեցել տառապանք պատճառել դիմողին, ապա Դատարանը հիշեցնում է, որ թեև այն, թե արդյոք տուժածի նկատմամբ դրսևորված վերաբերմունքի նպատակը եղել է նրան վիրավորելը կամ նվաստացնելը, հաշվի առնելու ենթակա հանգամանք է, նման մտադրության բացակայությունը չի կարող բացառել 3-րդ հոդվածի խախտումը (տե՛ս վերը հիշատակված *Kalashnikov-ի* վճիռը, կետ 101 և *Peers-ի* վճիռը, կետ 74):

67. Այդ իսկ պատճառով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ թիվ ԻԶ-33/1 կալանավայրում դիմողին կալանքի տակ պահելու պայմանների կապակցությամբ:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ԶՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

68. Դիմողը բողոքել է, որ տեղի է ունեցել ողջամիտ ժամկետում դատաքնության իր իրավունքի խախտում, և հայտարարել է, որ կալանքի մասին որոշումները բավարար չափով հիմնավորված չեն եղել: Նա հղում է կատարել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին, համաձայն որի.

»Սույն հոդվածի 1-ին կետ «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք... ունի ողջամիտ ժամկետում դատաքնության իրավունք կամ մինչև դատաքնությունն ազատ արձակվելու իրավունք:»

### A. Ընդունելիությունը

69. Դատարանը նկատում է, որ այս գանգատն ակնհայտորեն չի կարող համարվել անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այնուհետև Դատարանը նշում է, որ այն անընդունելի չէ նաև այլ հիմքերով: Այդ իսկ պատճառով այն պետք է ճանաչել ընդունելի:

### B. Ըստ էության

#### 1. Կողմերի փաստարկները

70. Կառավարությունը հայտարարել է, որ դիմողի կալանքն ունեցել է բավարար հիմքեր: Նրան կալանքի տակ են պահել, որովհետև նա մեղադրվել է խոշոր չափերի խարդախության մեջ, որը ծանր հանցագործություն է: Հիմքեր են եղել կարծելու, որ նա կդիմի փախուստի, քանի որ նրա հանցակիցը և երկու անչափահաս երեխաների հայրն անհայտացել էին: Նա կարող էր ոչնչացնել ապացույցները և խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը, որպիսի մտադրությունը հաստատվել էր անհայտ անձի հետ նրա հեռախոսային խոսակցության ձայնագրությամբ: Դիմողն այդ անձին զգուշացրել է ոստիկանության սպասվող այցելության մասին և խորհուրդ տվել ոչնչացնել փաստաթղթերը և ջնջել համակարգչային ֆայլերը: Այդ ձայնագրությունները հետազոտվել են դատարանների կողմից: Դիմողի կալանքը երկարացվել էր, որովհետև նրա գործը բարդ էր եղել և առաջացել էր նախաքննությունը շարունակելու անհրաժեշտություն: Ավելին, դիմողը խոչընդոտել էր նախնական քննությանը. նա հրաժարվել էր ցուցմունք տալուց, ձեռագրի, ստորագրության, ձայնի նմուշներ տրամադրելուց: Նաև առկա է եղել նրա կողմից նոր հանցագործության կատարման, վկաների վրա ազդելու, նրանց հետ պայմանավորվելու, ապացույցները կեղծելու կամ քննությանն այլ կերպ խոչընդոտելու վտանգ:

71. Դիմողը չի առարկել, որ իր նախնական կալանավորումն արդարացված էր: Նրա բողոքը վերաբերել է կալանքի չափազանց երկար տևողությանը: »Համապատասխան և բավարար» հիմքեր չեն եղել նրան կալանքի տակ այդքան երկար պահելու համար: Գործը շատ բարդ չի եղել: Նա օգտագործել է իրեն մեղավոր չճանաչելու իրավունքը, և ապացույց կամ ձեռագրի, ստորագրության և ձայնի նմուշներ տրամադրելուց հրաժարվելը չէր կարող արդարացնել իր կալանքը: Նա չի կարող պատասխանատվություն կրել այն բանի համար, որ իր հանցակիցը դիմել է փախուստի: Կառավարության հայտարարությունն առ այն, որ նա կարող էր փախուստի դիմել, եղել է ընդամենը ենթադրություն և որևէ ապացույցով չի հիմնավորվել:

Հակառակը, եթե ինքը փախուստի դիմեր, ապա ստիպված կբաժանվեր իր երեխաներից և կկորցներ աշխատանքը: Քանի որ իրեն կալանավորել են իր բնակարանի խուզարկության հաջորդ օրը, ապա, ցանկության դեպքում, ինքը

փախուստի դիմելու համար բավականաչափ ժամանակ է ունեցել: Նա չէր կարող ոչնչացնել ապացույցները, քանի որ իր բնակարանը և աշխատասենյակը խուզարկվել էին և բոլոր փաստաթղթերն առգրավվել և կցվել էին գործին: Ինչ վերաբերում է հեռախոսային խոսակցությունների ձայնագրություններին, ապա դատարանների կողմից դրանք չեն հետազոտվել, և կալանավորումը թույլատրելու մասին որոշումներում դատարանները դրանք չեն վկայակոչել: Ապացույցներով չի հիմնավորվել նաև այն, որ ինքը կարող էր կատարել նոր հանցագործություն:

## 2. *Դատարանի գնահատականը*

72. Դիմողը կալանքի է վերցվել 2004թ. հուլիսի 23-ին: 2005թ. օգոստոսի 4-ին նրան ազատ են արձակել: Այդպիսով, հաշվի առնելու ենթակա ժամանակահատվածը տևել է ավելի քան մեկ տարի:

73. Կողմերը չեն վիճարկել, որ դիմողին կալանավորելու մասին սկզբնական որոշումն ընդունվել է նրա կողմից խոշոր չափերի խարդախություն կատարելու հիմնավոր կասկածի հիման վրա: Դատարանը հիշեցնում է, որ հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն առ այն, որ կալանավորված անձը կատարել է հանցագործություն, հանդիսանում է անհրաժեշտ պայման կալանքի ժամկետի երկարացման օրինականության համար: Այդուհանդերձ, որոշակի ժամանակ անց դա դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե դատական իշխանությունների կողմից ներկայացված մյուս հիմքերը շարունակե՞լ են արդյոք արդարացնել ազատությունից զրկելը: Եթե նման հիմքերը եղել են «համապատասխան» և «բավարար», ապա Դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու պետական մարմինները դրսևորե՞լ են արդյոք «հատուկ ջանասիրություն» (տե՛ս *Labita v. Italy* [Մեծ պալատ], թիվ 26772/95, կետ 152 և 153, ECHR 2000-IV):

74. Հետազոտելով դիմողի կալանքի երկարացման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ շրջանային և մարզային դատարանները համառորեն վկայակոչել են մեղադրանքի ծավալը՝ որպես դիմողի կողմից փախուստի դիմելու, ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելու կամ նոր հանցանք կատարելու հավանական հնարավորության գնահատման հիմնական չափանիշ: Այդուհանդերձ,

Դատարանը բազմիցս նշել է, որ թեև անձին սպառնացող պատժի խստությունը հանդիսանում է փախուստի դիմելու կամ նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու կարևոր տարր, ազատությունից զրկելը երկարաձգելու անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը: Կալանքի ժամկետը չի կարող երկարացվել նաև ազատությունից զրկելու հետ կապված պատժի նշանակում կանխատեսելու պատճառով (տե՛ս *Letellier v. France*, 1991թ. հունիսի 26-ի վճիռը, Շարք A, թիվ 207, կետ 51, նաև տե՛ս *Panchenko v. Russia*, 2005թ. փետրվարի 8-ի վճիռը, թիվ 45100/98, կետ 102, *Goral v. Poland*, 2003թ. հոկտեմբերի 30-ի վճիռը, թիվ 38654/97, կետ 68, *Ilijkov v. Bulgaria*, 2001թ. հուլիսի 26-ի վճիռը, թիվ 33977/96, կետ 81): Դա հատկապես ճշմարիտ է այնպիսի գործերում, ինչպիսին տվյալ գործն է, երբ փաստերի իրավական որակումը և, այդպիսով՝ սպասվող պատժը, որոշել է մեղադրանքի կողմը՝ առանց այն հարցի նկատմամբ դատական վերահսկողության, թե հավաքված ապացույցներն առաջացրե՞լ են արդյոք հիմնավոր կասկած առ այն, որ դիմողը կատարել է մեղսագրվող հանցագործությունը, թե՛ ոչ (տե՛ս *Rokhlina v. Russia*, 2005թ. ապրիլի 7-ի վճիռը, թիվ 54071/00, կետ 66):

75. Ուստի անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ներպետական դատարանները հաստատել և համոզիչ կերպով ներկայացրել են այնպիսի կոնկրետ փաստեր, որոնք հիմնավորել են իրենց կողմից արված հետևություններն առ այն, որ դիմողը կարող էր փախուստի դիմել, խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը կամ կատարել նոր հանցագործություն: Դատարանն այս կապակցությամբ հիշեցնում է, որ ներպետական իշխանությունների պարտականությունն է կալանքի ժամկետի երկարացման հիմքերին համապատասխանող կոնկրետ փաստերի առկայությունն ապացուցելը: Նման գործերով ապացուցման պարտականությունը կալանքի տակ գտնվող անձի վրա դնելը հավասարազոր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջից շեղման՝ դրույթ, որը կալանքը, իբրև բացառություն, համարում է ազատության իրավունքի սահմանափակում, որը թույլատրելի է սպառնիչ թվարկված և խիստ որոշակի դեպքերում (տե՛ս վերը մեջբերված *Rokhlina*-ի վճիռը, կետ 67, *Ilijkov*-ի վճիռը, 84-85 կետեր):

76. Դիմողի կողմից փախուստի դիմելու հավանականությունը ներպետական դատարանները գնահատել են՝ վկայակոչելով այն փաստը, որ նրա հանցակիցը փախուստի էր դիմել: Եվրոպական դատարանի կարծիքով՝ հանցակցի վարքագիծը չի կարող որոշիչ փաստարկ լինել անազատության մեջ գտնվող անձի կողմից փախուստի դիմելու վտանգը գնահատելու համար: Նման գնահատականը պետք է հիմնված լինի կալանավորին վերաբերող հանգամանքների վրա: Տվյալ գործով ներպետական դատարանները չեն մատնանշել դիմողի բնավորության կամ պահվածքի որևէ դրսևորում, որը կարող էր արդարացնել նրանց եզրահանգումն առ այն, որ դիմողը ներկայացրել է փախուստի դիմելու շարունակական վտանգ: Մյուս կողմից, դիմողը բազմիցս վկայակոչել է այնպիսի փաստեր, որոնք նվազեցրել են փախուստի դիմելու վտանգը: Այդուհանդերձ, ներպետական դատարանները որևէ ուշադրություն չեն դարձրել դիմողի այն փաստարկներին, որ նա հանցավոր անցյալ չի ունեցել, Վլադիմիրում ունեցել է մշտական բնակության վայր և աշխատանք, կայուն կյանք, երկու անչափահաս երեխաներ, և որ նրա հայրը ծանր հիվանդ է եղել: Նրանք հաշվի չեն առել այն փաստը, որ դիմողը փախուստի դիմելու հնարավորություն է ունեցել իր բնակարանը խուզարկելուց հետո, սակայն նա շարունակել է մնալ քննիչի տրամադրության տակ: Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ փախուստի դիմելու վտանգն այս գործով հիմնավորված չէ:

77. Այնուհետև Դատարանն ընդգծում է, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետի ներքո՝ իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ անազատության մեջ պահելու հարցը լուծելիս, պարտավոր են քննարկել մեղադրյալի՝ դատարան ներկայանալն ապահովող այլընտրանքային միջոցների կիրառման հարցը: Իսկապես, տվյալ դրույթը հռչակում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու» իրավունքը, այլ նաև սահմանում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով» (տե՛ս *Sulaoja v. Estonia*, 2005թ. փետրվարի 15-ի վճիռը, թիվ 55939/00, կետ 64՝ վերջում, *Jabłoński v. Poland*, 2000թ. դեկտեմբերի 21-ի վճիռը, թիվ 33492/96, կետ 83):

78. Տվյալ գործում դիմողի կալանքի ողջ ընթացքում իշխանությունները չեն քննարկել ավելի մեղմ խափանման միջոցներով նրա ներկայանալն ապահովելու հնարավորությունը, չնայած որ դիմողի փաստաբանները բազմիցս միջնորդել են

նրան ազատ արձակել գրավով կամ քաղաքից չբացակայելու մասին ստորագրությամբ՝ »խափանման միջոցներով», որոնք հստակորեն նախատեսված են Ռուսաստանի օրենսդրությամբ՝ ապահովելու քրեական գործի պատշաճ քննությունը (տե՛ս վերը՝ կետ 45): Ներպետական դատարաններն իրենց որոշումներում չեն բացատրել նաև, թե ազատությունից զրկելուց բացի այլ միջոցներն ինչու չէին կարող ապահովել դատական քննության պատշաճ ընթացքը: Այս բացթողումն առավել ևս անբացատրելի է դառնում այն փաստի հաշվառմամբ, որ քրեական դատավարության նոր օրենսգիրքը դատարաններին հստակորեն առաջարկում է կիրառել ավելի մեղմ ներպետական միջոցներ՝ որպես կալանավորման այլընտրանքներ (տե՛ս վերը՝ 47-րդ կետը):

79. Ղիմողի կալանքի ժամկետի երկարացման միակ այլ հիմքն այն էր, որ ներպետական դատարանները գտել էին, որ Ղիմողը կարող էր ոչնչացնել ապացույցները, խոչընդոտել արդարադատության իրականացմանը կամ կատարել նոր հանցագործություն: Դատարանն ընդունում է, որ նախնական քննության սկզբնական փուլերում Ղիմողի կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտելը կարող էր արդարացնել կալանքի տակ պահելը: Այդուհանդերձ, ապացույցները հավաքելուց հետո այդ հիմքը դարձել է անհամապատասխան: Ավելին, ներպետական իշխանությունները չեն ներկայացրել որևէ հիմք, թե ինչու են իրենք համոզված եղել, որ առկա է նման վտանգ: Կառավարությունը հղում է կատարել Ղիմողի հեռախոսային խոսակցությունների ձայնագրություններին և հայտարարել, որ նա կարող էր ազդել վկաների վրա կամ կեղծել ապացույցները: Եվրոպական դատարանը հիշեցնում է, որ իր խնդիրը չէ Ղիմողի կալանքի մասին որոշում կայացրած ներպետական իշխանություններին իրենով փոխարինելը և փաստերի սեփական վերլուծություն իրականացնելը՝ կալանքին դեմ կամ կողմ փաստարկելով (տե՛ս *Nikolov v. Bulgaria*, 2003թ. հունվարի 30-ի վճիռը, թիվ 38884/97, կետ 74, վերը հիշատակված *Labita*-ի վճիռը, կետ 152): Այս հանգամանքներն առաջին անգամ վկայակոչվել են Դատարանում, իսկ ներպետական դատարաններն իրենց որոշումներում ոչ մի անգամ դրանք չեն մատնանշել:

80. Այնուհետև, Դատարանը նկատում է, որ Ղիմողի կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում հաշվի չի առնվել նրա անձնական վիճակը: Որոշումների մեծ մասում ներպետական դատարաններն օգտագործել են միևնույն

համառոտ բանաձևը և ստանդարտ ձևակերպումը: Իսկ մարզային դատարանի՝ 2005թ. հուլիսի 19-ի և օգոստոսի 2-ի որոշումներում դիմողի կալանքի ժամկետի երկարացման ոչ մի հիմք չի մատնանշվել: Դրանցում միայն նշվել է, որ «դիմողը պետք է մնա կալանքի տակ»: Ավելի զարմանալի է այն, որ մինչև այդ ժամանակը դիմողն արդեն կալանքի տակ էր պահվել մեկ տարի, նախնական քննությունն ավարտվել էր և գործն ուղարկվել դատարան:

81. Տարօրինակ է նաև այն, որ 2005թ. փետրվարի 22-ի որոշման մեջ շրջանային դատարանը նշել է, որ չի պահանջվում, որ կալանքի ժամկետի երկարացնելու անհրաժեշտությունը հիմնավորող՝ դատախազի ներկայացրած նյութերի վերաբերյալ դատարանը լսի կողմերի կարծիքը: Այս կապակցությամբ Դատարանը հիշեցնում է, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետը պարտավորեցնում է «պաշտոնատար անձին» լսել կասկածյալին, հետազոտել նախնական կալանքին կողմ կամ դեմ վկայող բոլոր փաստերը և կալանքի մասին որոշման մեջ շարադրել այդ որոշման համար հիմք ծառայած փաստերը (տե՛ս *Hood v. the United Kingdom* [Մեծ պալատ], թիվ 27267/95, կետ 60, ECHR 1999-I, *Schiesser v. Switzerland*, 1979թ. դեկտեմբերի 4-ի վճիռը, Շարք A, թիվ 34, կետ 31): Ուստի՝ առանց դիմողի դիրքորոշումը լսելու, առանց դատախազի կողմից ներկայացված նյութերը մեկնաբանելու հնարավորություն տալու և ազատ արձակելը հիմնավորող՝ դիմողի բերած փաստարկները հաշվի առնելու՝ նրա կալանքի ժամկետի երկարացումն անհամատեղելի է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքների հետ:

82. Ի վերջո, Դատարանը նկատում է, որ քննության ընթացքում իշխանությունները ոչ մի անգամ չեն քննարկել այն հարցը, թե դիմողի կալանքի տևողությունը գերազանցում է արդյոք «ողջամիտ ժամկետը»: Ներպետական որոշումներում նման վերլուծություններ պետք է կատարվեին հատկապես այն բանից հետո, երբ դիմողն ամիսներ էր անցկացրել կալանքի տակ. այդուհանդերձ, ողջամիտ ժամկետի հարցը երբևէ չի քննարկվել:

83. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը գտնում է, որ առանց կոնկրետ փաստեր ներկայացնելու կամ այլընտրանքային «խափանման միջոցների» կիրառման հարցը քննարկելու, և մեծապես հիմնվելով մեղադրանքի ծանրության վրա՝ իշխանությունները երկարացրել են դիմողի կալանքի ժամկետն այնպիսի հիմքերով, որոնք չեն կարող դիտվել որպես «համապատասխան և բավարար»: Նման

հանգամանքներում անհրաժեշտ չէ որոշել, թե արդյոք գործը բարդ է եղել, և արդյոք քննությունը կատարվել է «հատուկ ջանասիրությամբ», թե՛ ոչ: Այդուհանդերձ, տվյալ գործում Դատարանը չի կարող համաձայնել Կառավարության այն գնահատականին, որ ցուցմունք տալուց դիմողի հրաժարվելը դանդաղեցրել է քննության ընթացքը և առաջացրել ձգձգումներ, որոնք վերագրելի են դիմողին: Դիմողը պարտավոր չէր համագործակցել իշխանությունների հետ, և նրան չի կարելի մեղադրել լուռ մնալու իր իրավունքն օգտագործելու համար (վերապահումներով՝ տե՛ս *Yağcı and Sargın v. Turkey*, 1995թ. հունիսի 8-ի վճիռը, Շարք A, թիվ 319-A, կետ 66, *W. v. Switzerland*, 1993թ. հունվարի 26-ի վճիռը, Շարք A, թիվ 254-A, կետ 42): Ապացույցներ հավաքելու և դիմողի նկատմամբ նախաքննության կատարումը ողջամիտ ժամկետում ապահովելու պարտականությունը դրված է եղել դատախազների վրա: Եվրոպական դատարանը բավարարված չէ Կառավարության փաստարկով առ այն, որ նախաքննության ձգձգումը վերագրելի է դիմողին:

84. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

85. Դիմողը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո բողոքել է, որ իրեն թույլ չի տրվել մասնակցելու 2004թ. օգոստոսի 10-ին վերադաս դատարանում իր բողոքի քննությանը: Նա նաև բողոքել է, որ 2004թ. սեպտեմբերի 22-ին, նոյեմբերի 22-ին և դեկտեմբերի 22-ին և 2005թ. հունվարի 21-ին կայացված՝ կալանքի որոշումների դեմ իր բողոքները դատարանների կողմից արագ չեն քննվել: 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝

»Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:»

#### A. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

86. Եվրոպական Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով առերևույթ անհիմն չէ: Դատարանը նշում է նաև, որ գանգատը չի կարող անընդունելի ճանաչվել որևէ այլ հիմքով ևս: Ուստի այն պետք է ճանաչել ընդունելի:

## **B. Ըստ էության**

### *1. 2004 թվականի օգոստոսի 10-ի նիստից բացակայելը*

87. Կառավարությունը հայտարարել է, որ դիմողի բողոքի քննությանը նրա ներկայանալու միջնորդության մերժումը համապատասխանել է ներպետական օրենսդրությանը, որը սահմանափակել է դատապարտված կամ արդարացված անձանց՝ վերադաս դատարանում բողոքի քննությանը ներկա գտնվելու իրավունքը: Ամեն դեպքում, դիմողի փաստարկները հստակորեն շարադրված են եղել նրա բողոքում և լրացուցիչ պարզաբանումների կարիք չեն ունեցել: Դիմողի փաստաբանները ներկա են գտնվել բողոքի քննությանը, որով պաշտպանության կողմի իրավունքներն ապահովվել են: Կառավարությունը հավելել է, որ 2004թ. նոյեմբերի 3-ին դիմողը ներկա է գտնվել բողոքի քննությանը և չի պահանջել հետագա նիստերին ներկա գտնվելու թույլտվություն:

88. Դիմողն ընդունել է, որ իր փաստաբանները մասնակցել են 2004թ. օգոստոսի նիստին: Այդուհանդերձ, նա նշել է, որ պահանջվել է նաև իր մասնակցությունը, քանի որ նա նպատակ է ունեցել դատարանին նկարագրելու իրեն կալանքի տակ պահելու սարսափելի պայմանները: Նա փաստարկել է, որ ներպետական դատարանների կողմից ընդունված պրակտիկան ստիպել է իրեն ընտրություն կատարել անձնական մասնակցության և իրավաբանական ներկայացուցչության միջև: Չնայած դիմողին իսկապես թույլ է տրվել ներկա գտնվել 2004թ. նոյեմբերի 3-ի նիստին, այդ փաստը միայն ապացուցել է, որ դատարաններն իր միջնորդություններին կամայականորեն են վերաբերվել: Հետագա նիստերին ներկա գտնվելու միջնորդություն ինքը չի հարուցել՝ դատարան տանող տրանսպորտի անմարդկային պայմանների պատճառով:

89. Դատարանը հիշեցնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի դատական վերանայման ներկայացնելու, 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, իրեն ազատությունից զրկելու «օրինականության» համար էական նշանակություն ունեցող դատավարական և նյութական պայմանները (տե՛ս *Brogan and Others v. the United Kingdom*, 1988թ. նոյեմբերի 29-ի վճիռը, Շարք A, թիվ 154-B, կետ 65): Չնայած ոչ միշտ է անհրաժեշտ, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո դատավարությունն ընթանա այն նույն երաշխիքներով, ինչ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով քրեական կամ քաղաքացիական դատավարության համար նախատեսվածները, այն պետք է ունենա դատավարական բնույթ և նախատեսի երաշխիքներ, որոնք համապատասխանում են քննարկվող ազատությունից զրկելու բնույթին (տե՛ս *Reinprecht v. Austria*, թիվ 67175/01, կետ 31, ECHR 2005-..., հետագա հղումներով հանդերձ): Դատավարությունը պետք է մրցակցային լինի, և կողմերի համար մշտապես պետք է ապահովվի «զենքերի» հավասարություն: 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի շրջանակներում կալանավորված անձի գործով պահանջվում է դատական նիստի անցկացում (տե՛ս *Trzaska v. Poland*, 2000թ. հուլիսի 11-ի վճիռը, թիվ 25792/94, կետ 74): Կալանավորված անձի կողմից անձամբ կամ ներկայացուցչության որևէ եղանակով դատական նիստի ժամանակ լսելի լինելու հնարավորությունը դասվում է ազատությունից զրկելու հետ կապված գործերում կիրառվող դատավարական հիմնարար երաշխիքների շարքին (տե՛ս *Kampanis v. Greece* 1995թ. հուլիսի 13-ի վճիռը, Շարք A, թիվ 318-B, կետ 47):

90. Դատարանը նկատում է, որ 2004թ. օգոստոսի 10-ին դիմողի՝ սկզբնական կալանավորման դեմ բերված բողոքը քննության է առնվել: Բողոքի քննությունն իրականացվել է դատախազի և դիմողի պաշտպանի մասնակցությամբ, սակայն դիմողն անձամբ ներկա չի գտնվել՝ չնայած այդ կապակցությամբ իր միջնորդությանը:

91. Դատարանը նախևառաջ նշում է, որ դիմողը միջնորդել է իրեն թույլ տալ ներկա գտնվել վերադաս դատարանում՝ իր անձնական վիճակի հետ սերտորեն կապված հիմքերով իրեն ազատ արձակելու համար միջնորդելու նպատակով: Առաջին հերթին, նա նպատակ է ունեցել նկարագրել իրեն կալանքի տակ պահելու պայմանները, որոնց մասին իր պաշտպանն անմիջական պատկերացում չի ունեցել: Միայն դիմողն անձամբ կարող էր նկարագրել կալանքի պայմանները և անհրաժեշտության դեպքում պատասխանել դատավորի հարցերին: Ավելին, դա եղել է նրա առաջին

հնարավորությունը ներպետական դատարանների ուշադրությունն այս հարցի վրա հրավիրելու համար, քանի որ 2004թ. հուլիսի 24-ի նիստի ժամանակ՝ իր կալանավորման օրը, նա չէր կարող իրեն կալանքի տակ պահելու պայմանների մասին նախնական պատկերացում ունենալ: Երկրորդ, պարզվում է, որ վերադաս դատարանն իր պատճառաբանությունները հիմնել է դիմողի «անձի» գնահատման վրա: Դա նա կատարել է այդ գրավոր փաստաթղթերի հիման վրա՝ առանց դիմողին անձամբ հարցաքննելու և նրան իր անձնական վիճակը նկարագրելու հնարավորություն տալու: Վերջապես, Դատարանը նշում է, որ վերադաս դատարանն առաջին անգամ էր քննում նրա կալանքին կողմ կամ դեմ բերված փաստարկները: Կարևորություն տալով բողոքի քննության առաջինը լինելու, վերադաս դատարանի կողմից դիմողի անձը գնահատելու հանգամանքներին և նրա՝ իր կալանքի որոշակի պայմանների հիման վրա ազատ արձակվելու մասին միջնորդելու մտադրությանը՝ դիմողի մասնակցությունն անհրաժեշտ է եղել բավարար տեղեկություններ տրամադրելու և իր պաշտպանին համապատասխան ցուցումներ տալու համար (տե՛ս *Graužinis v. Lithuania*, 2000թ. հոկտեմբերի 10-ի վճիռը, թիվ 37975/97, կետ 34):

92. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը գտնում է, որ 2004թ. օգոստոսի 10-ի դատական նիստին ներկա գտնվելու մասին միջնորդությունը մերժելը դիմողին զրկել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իր կալանքի օրինականության նկատմամբ արդյունավետ վերահսկողությունից:

93. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

## 2. Վերանայման արագությունը

94. Կառավարությունը հայտարարել է, որ դիմողի բողոքները վերադաս դատարանում քննվել են ներպետական օրենսդրությամբ նախատեսված ժամկետների սահմաններում:

95. Դիմողն առարկել է, որ խնդրո առարկան եղել է իր ազատության իրավունքը, իսկ ինքն անմարդկային պայմաններում պահվել է կալանքի տակ: Ուստի վերադաս դատարանին հասցեագրված իր բողոքների արագ քննությունը խիստ կարևոր էր:

96. Դատարանը նկատում է, որ ներպետական դատարաններին պահանջվել է երեսունվեց, քսանվեց, երեսունվեց և քսանինը օր կալանքի մասին որոշման դեմ դիմողի բերած բողոքները քննելու համար (տե՛ս վերը՝ 14, 18, 20 և 23-րդ կետեր): Ոչինչ չի հաստատում, որ դիմողը, ներկայացնելով բողոքները, հանդիսացել է դրանց քննության հետաձգման պատճառ: Դատարանը գտնում է, որ այս չորս ժամանակահատվածները չեն կարող համարվել 5-րդ հոդվածի 4-րդ կետի «արագության» պահանջը բավարարող՝ հատկապես հաշվի առնելով այն, որ դրանց ընդհանուր տևողության պատճառ են հանդիսացել իշխանությունները (տե՛ս, օրինակ, *Rehbock v. Slovenia* վճիռը, թիվ 29462/95, կետ 85-86, ECHR 2000-XI, որտեղ քսաներկու օր տևած վերանայման վարույթը «արագ» չի համարվել):

97. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

#### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

98. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն.

»Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրության խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»

##### A. Պատճառված վնասը

99. Դիմողը պահանջել է 100 000 եվրո ոչ նյութական վնասի համար:

100. Կառավարությունը փաստարկել է, որ պահանջը չափազանց մեծ է և անհիմն: Խախտման ճանաչումն ինքնին կհանգեցնի բավարար փոխհատուցման:

101. Եվրոպական դատարանը նշում է, որ տվյալ գործում հաստատվել է ծանր խախտումների համակցություն: Դիմողը մեկ տարի գտնվել է կալանքի տակ՝ անմարդկային և նվաստացուցիչ պայմաններում: Նրա կալանքը զուրկ է եղել բավարար հիմքերից: Կալանավորման սկզբնական որոշման դեմ նրա բողոքը քննվել

է իր բացակայությամբ: Վերջապես, տարբեր առիթներով նրան զրկել են կալանքի օրինականությունն արագ ստուգելու իրավունքից: Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմողի տառապանքները և անհանգստության զգացումը չեն կարող փոխհատուցվել միայն խախտման փաստի հաստատմամբ: Որոշումն արդարացիության հիման վրա կայացնելով՝ Դատարանը դիմողին տրամադրում է 16 000 եվրո ոչ նյութական վնասի համար՝ հավելած դրանից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկերը:

## **B. Ծախքեր և ծախսեր**

102. Հիմնվելով գրավոր ապացույցների և փաստաբանի աշխատաժամերի ցուցակի վրա՝ դիմողը պահանջել է 6 150 եվրո՝ պարոն Օվչիննիկովի կողմից իրեն ներկայացնելու համար, և 1 750 եվրո՝ պարոն Բագրյանսկու կողմից իրեն ներկայացնելու համար, որոնք համապատասխանաբար 123 և 35 ժամ են ծախսել գանգատը, դիրքորոշումները և արդարացի փոխհատուցման պահանջները պատրաստելու համար: Դիմողը և իր ներկայացուցիչները համաձայնության են եկել, որ վերջիններիս աշխատանքը պետք է վարձատրվի 50 եվրո յուրաքանչյուր ժամի համար:

103. Կառավարությունը փաստարկել է, որ դիմողի կողմից պահանջվող գումարները չափազանց մեծ են: Այն հայտարարել է, որ դիմողը ցույց չի տվել, որ իր ներկայացուցիչներն իրոք այդքան ժամանակ են ծախսել գանգատը պատրաստելու համար:

104. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմողն իրավունք ունի ստանալու ծախքերի և ծախսերի փոխհատուցում, եթե կարողանա հիմնավորել, որ դրանք փաստացի և անհրաժեշտաբար կատարվել են և դրանց չափը ողջամիտ է: Տվյալ գործով, հիմնվելով առկա փաստաթղթերի և վերը նշված չափանիշի վրա, Դատարանը գտնում է, որ արդարացի է դիմողին 4 500 եվրո տրամադրելը՝ հավելած դրանից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկերը:

## **C. Տուգանային տոկոսները**

105. Դատարանը նպատակահարմար է համարում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

### **ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՅԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՋԱՅՆ**

1. ընդունելի է ճանաչում գանգատը,
2. վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ դիմողին վլադիմիրի մարզի թիվ ԻԶ-33/1 կալանավայրում պահելու պայմանների կապակցությամբ,
3. վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում,
4. վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ 2004թ. օգոստոսի 10-ին վերաքննիչ բողոքի քննությանը ներկա գտնվելու միջնորդությունը մերժելու կապակցությամբ,
5. վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ 2004թ. սեպտեմբերի 22-ի, նոյեմբերի 22-ի և դեկտեմբերի 22-ի՝ կալանքի մասին որոշումների դեմ դիմողի բողոքների քննության տևողության կապակցությամբ,
6. վճռում է, որ
  - (a) պատասխանող Պետությունը պետք է Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ դիմողին ներքոնշյալ գումարները պետք է վճարի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում, որոնք պետք է հաշվվեն ռուսական ռուբլիով՝ փոխհատուցման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքին համապատասխան,
    - (i) 16 000 (տասնվեց հազար) եվրո ոչ նյութական վնասի համար,
    - (ii) 4 500 (չորս հազար հինգ հարյուր) եվրո ծախքերի և ծախսերի համար,
    - (iii) այդ գումարներից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկային պարտավորությունների գումարը,
  - (b) վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային

տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս,

7. *մերժում է* դիմողի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարվել է անգլերենով և գրավոր հրապարակվել 2006 թվականի հունիսի 1-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն: